«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
տ.գ.դ., դոցենտ
_____Թ. Մ. Մկրտչյան

«_19_» _09_ 2020թ.

ԿԱՐԾԻՔ

Անի Համլետի Գալստյանի «Արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնի 2020 թվականի սեպտեմբերի 10-ի նիստում (արձանագրություն N 1-2020):

Մասնակցում էին՝

Նազարյան Գրիգոր՝ տնտեսագիտության թեկնածու, դեցենտ (ամբիոնի վարիչի պաշտոնակատար) **Գալոյան Դիանա՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, **Հախվերդյան Դավիթ՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, **Թադևոսյան Զոյա՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, **Կիրակոսյան Վերգինե՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Մարգարյան Թամար՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Անանյան Անուշ՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Ավետիսյան Թադևոս՝**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ (գրախոս), **Սարգսյան Ժորա՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ (գրախոս), **Փախլյան Աննա՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Ժամկոչյան Անահիտ՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Ֆահրադյան Նարինե՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Մկրտչյան Արա՝** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, **Հայրապետյան Ալբերտ՝** տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, **Աղաջանյան Լուսինե՝** տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, **Աղաջանյան Սուսաննա՝** տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, **Խաչատրյան Լիլիթ՝** տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, **Ուլիխանյան Տաթևիկ՝** տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, **Շեկոյանը Նարինե՝** ավագ լաբորանտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արժութային փոխարժեքի կարգավորման ռեժիմի ընտրությունը միջազգային տնտեսագիտության մեջ շարունակական քննարկման առարկա է: Չնայած արժութային կարգավորման ռեժիմի ընտրությունը հետաքրքրություն է ներկայացնում բոլոր երկրների համար, այն հատկապես կարևոր է զարգացող տնտեսությամբ երկրների տեսանկյունից, որոնք հաճախ ունեն տարբեր տնտեսական կառուցվածքներ և ավելի թույլ ինստիտուտներ, քան զարգացած տնտեսությունները, ինչն էլ սահմանափակում է նրանց ընտրության հնարավորությունը:

Չնայած մի շարք զարգացող երկրներ որդեգրել են հաստատագրված փոխարժեքի քաղաքականություն, նման ռեժիմներն ունեն շատ քիչ կողմնակիցներ: Դրանք շատերի կողմից դիտվում են որպես լավագույն դեպքում օգտակար ժամանակավոր միջոց, որը հարմար է միայն այն երկրների համար, որոնք, ի վերջո, հույս ունեն անցնել ավելի ճկուն ռեժիմի:

Մյուս կողմից, պաշտոնապես ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն վարող երկրներից շատերն ակնհայտ վախ են ցուցաբերում լողալուց: Նրանք պարբերաբար միջամտում են արժութային շուկային, որպեսզի նպաստեն փոխարժեքի

կայունացմանը՝ պատրաստակամորեն զոհաբերելով ներքին այլ նպատակները, ինչպիսիք են գների կայունությունը և լրիվ զբաղվածությունը՝ արժութային փոխարժեքի կայունության պահպանման համար:

Զարգացող երկրներում նման վարքագծի դրսևորման հիմնական պատճառներն են անվստահությունն ազգային արժույթի նկատմամբ, անվանական խարսխի բացակայությունը, արտարժութային արտաքին պարտքը, անարդյունավետ հակաճգնաժամային դրամավարկային քաղաքականությունը և այլն:

Արժութային կարգավորման ռեժիմի ընտրության տեսանկյունից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի փորձը: Հայաստանի տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշները վկայում են այն մասին, որ զարգացող տնտեսություններին բնորոշ գրեթե բոլոր վերոնշյալ հիմնախնդիրները գոյություն ունեն նաև հայկական տնտեսական իրականության մեջ:

Իրավիճակն էլ ավելի սրվեց 2008-2009թթ. և 2014-2015թթ. ճգնաժամերի ընթացքում՝ քննարկումների նոր ալիք բարձրացնելով օպտիմալ արժութային ռեժիմի ընտրության հարցի շուրջ Հայաստանում:

Վերոհիշյալ հարցադրումների քննարկմանն ու որոշակի առաջարկությունների մշակմանն է նվիրված «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Անի Գալստյանի ատենախոսությունը: Ներկայացված հիմնախնդիրներով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է արժութային կարգավորման ռեժիմի ընտրությունը Հայաստանի Հանրապետությունում՝ արտահանման ներուժի և տնտեսական աճի կայուն ու երկարաժամկետ տեմպերի խթանման համատեքստում:

Դրված նպատակին հասնելու համար աշխատանքում կարևորվել են հետևյալ խնդիրները.

✓ բացահայտել զարգացող տնտեսությամբ երկրներում արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները և տեսական մոտեցումները,

✓ բացահայտել տնտեսական միության շրջանակներում արժութային ինտեգրման հիմնական չափանիշները,

✓ բացահայտել արտահանման ներուժի վրա արժութային կարգավորման ռեժիմի ազդեցության տեսական և էմպիրիկ մոտեցումները,

✓ բացահայտել և վերլուծել տնտեսական աճի և արժութային փոխարժեքի կարգավորման փոխազդեցության տեսական և գործնական մոտեցումները,

✓ վերլուծել ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող արժութային կարգավորման ռեժիմը և բացահայտել դրա ընտրության հիմնախնդիրները Հայաստանում,

✓ բացահայտել արժութային փոխարժեքի ձևավորման հիմնական գործոնները Հայաստանում և գնահատել դրանց ազդեցությունը տնտեսաչափական մոդելի կիրառմամբ,

✓ գնահատել ԵԱՏՄ միասնական շուկայում ենթադրվող արժութային ինտեգրման հնարավորությունները,

✓ վերլուծել Հայաստանի արտահանման ներուժի վրա ՀՀ դրամի տատանողականության ազդեցությունը ԵԱՏՄ-ին անդամակցության պայմաններում,

✓ բացահայտել և գնահատել Հայաստանի տնտեսական աճի վրա արժութային կարգավորման ռեժիմի ազդեցության ուղիները,

✓ մշակել Հայաստանում արժութային կարգավորման ռեժիմի ընտրության մոտեցում՝ արտահանման ներուժի և տնտեսական աճի խթանման տեսանկյունից:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

1. Գնահատվել են ՀՀ դրամի փոխարժեքի ձևավորման էկզոգեն և էնդոգեն հիմնական գործոնները վեկտորային ավտոռեգրեսիոն (VAR) մոդելի կիրառմամբ և բացահայտվել են արժութային կարգավորման ոչ շուկայական տարրերը:
2. Գնահատվել է ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող արժութային կարգավորման ռեժիմի ազդեցությունը տնտեսության իրական հատվածի վրա՝ տնտեսական աճի կայուն և երկարաժամկետ տեմպերի խթանման (ապախթանման) տեսանկյունից, տնտեսաչափական մոդելների կիրառմամբ:
3. Մշակվել է Հայաստանի Հանրապետության արտահանման ներուժի վրա ՀՀ դրամի փոխարժեքի տատանողականության ազդեցության գնահատման մոտեցում:
4. Գնահատվել է մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների հնարավոր ազդեցությունը ԵԱՏՄ միասնական շուկայում ենթադրվող արժութային ինտեգրման հնարավորությունների վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Իրականացված հետազոտությունների արդյունքում տրվել են եզրակացություններ և առաջարկություններ Հայաստանում արժութային կարգավորման արդիականացման, ինչպես նաև դրա իրականացման արդյունավետության բարձրացման համար՝ Հայաստանի արտաքին առևտրային մրցունակության բարձրացման, ինչպես նաև տնտեսական աճի խթանման նպատակով: Աշխատանքի գործնական նշանակությունը պայմանավորված է ՀՀ Կենտրոնական Բանկի արժութային կարգավորման քաղաքականության մշակման համար կառուցված մոդելների և ստացված եզրահանգումների կիրառման հնարավորությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Աշխատանքը շարադրված է 144 էջի վրա (առանց հավելվածների) և ներառում է 17 աղյուսակ և 44 նկար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Աշխատության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության գլխավոր նպատակը և խնդիրները, ներկայացվել են հիմնական գիտական արդյունքները և դրանց գործնական նշանակությունը, տրվել են ատենախոսության տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ **«Արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները զարգացող երկրներում և տնտեսական միության շրջանակներում»** գլխում ներկայացվել են զարգացող երկրներում և տնտեսական միության շրջանակներում արժութային կարգավորման ռեժիմի ընտրության տեսական հիմքերը և միջազգային փորձը: Վերլուծվել են արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները, ինչպես նաև արժութային կարգավորման տարբեր ռեժիմների ազդեցությունը տնտեսական աճի և արտահանման ներուժի վրա:

Ատենախոսության երկրորդ՝ **«Արժութային կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում և ԵԱՏՄ շրջանակներում»** գլուխը նվիրված է Հայաստանում արժութային կարգավորման հիմնախնդիրների հայտնաբերմանը, ՀՀ դրամի ձևավորման հիմնական էկզոգեն և էնդոգեն գործոնների բացահայտմանն ու գնահատմանը, ինչպես նաև ԵԱՏՄ միասնական շուկայում ենթադրվող արժութային ինտեգրման հնարավորությունների գնահատմանը: Հեղինակի կողմից կառուցվել է ՀՀ դրամի ձևավորման հիմնական գործոնների գնահատման տնտեսաչափական մոդել:

Ատենախոսության երրորդ՝ **«Արժութային փոխարժեքի ազդեցությունը արտահանման ներուժի և տնտեսական աճի վրա Հայաստանի Հանրապետությունում»** գլխում վերլուծվել է Հայաստանի արտահանման ներուժի վրա

ՀՀ դրամի ազդեցությունը հայրենական ապրանքների արտաքին գնային մրցունակության միջոցով, ինչպես նաև բացահայտվել են տնտեսական աճի վրա ՀՀ դրամի ազդեցության ուղիները: Կառուցվել է տնտեսական աճի վրա ՀՀ դրամի ազդեցության մոդել և մշակվել են երկու սցենարներ:

Եզրակացություններ և առաջարկություններ բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված առաջարկություններ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հեղինակը անհրաժեշտ խորությամբ չի քննարկել ՀՀ դրամի փոխարժեքի ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա: Հատկապես խոսքը վերաբերում է անուղղակի հարկերից ձևավորվող պետական բյուջեի մուտքերի փոփոխությանը՝ փոխարժեքի տատանումներով պայմանավորված: Կարծում ենք, որ այս խնդիրն ուղղակիորեն վերաբերում է ատենախոսության թեմային: Աշխատանքն առավել կշահեր, եթե ուսումնասիրության առարկա դառնար արժույթի փոխարժեքի և պետական բյուջեի եկամուտների փոփոխությունների փոխազդեցությունը՝ նկատի ունենալով, որ վերջինս ունի իր մակրոտնտեսական ազդեցությունները պետական ներդրումների և ծախսերի, արտաքին պարտքի սպասարկման, ինչպես նաև տնտեսական աճի ուղղություններով: Ընդ որում, այս հիմնական ուղղությունները որոշակիորեն ուսումնասիրված են հեղինակի կողմից ատենախոսության շրջանակներում:
2. Հեղինակը անհրաժեշտ խորությամբ չի քննարկել ՀՀ դրամի փոխարժեքի ազդեցությունը գների մակարդակի վրա: Հատկապես խոսքը վերաբերում է ՀՀ ներմուծվող ապրանքների և ներմուծման բաղադրիչ ունեցող տեղական արտադրության ապրանքների գնաճին: Այս խնդիրն էական նշանակություն ունի սոցիալական ազդեցության տեսանկյունից՝ հատկապես կենսապահովման

նվազագույն զամբյուղի կազմում ներառված առաջին անհրաժեշտության ապրանքների մասով:

3. Հեղինակն առաջարկում է հրաժարվել արժութային փոխարժեքի կայունության ապահովման ոչ շուկայական մեխանիզմներից և իրականացնել ազատ լողացող արժութային փոխարժեքի և չմիջամտության քաղաքականություն: Սակայն պետք է փաստել, որ այս առաջարկի իրականացման դեպքում հնարավոր սոցիալական հետևանքների հավաքական գնահատումը բացակայում է: Կարծում ենք, որ այս գնահատումն առարկայական և անհրաժեշտ պայման է՝ նման արմատական փոփոխությունների պարագայում: Այս շրջանակներում հեղինակն առաջարկում է նաև նպատակադրել ՀՀ դրամի արժեզրկումից գնաճի զգալիորեն հետ մնալը: Այս նպատակադրումն անխոս՝ ունի սոցիալական առաջնային բաղադրիչ: Սակայն պետք է արձանագրել. ատենախոսության շրջանակներում առանցքային այս նպատակադրման իրականացման գործնական լուծումները ներկայացված չեն: Այսպիսով՝ այս նպատակադրումը և ՀՀ դրամի փոխարժեքի ուղղակի և անուղղակի կարգավորումից հրաժարվելու վերաբերյալ հեղինակի առաջարկությունները գործնականում կարող են ունենալ հակասական դրսևորումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված թերությունները և դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության գիտական և գործնական արժեքը, և, ըստ էության, նպատակ ունեն նպաստելու հեղինակի հետագա ուսումնասիրությունների առաջնային ուղղությունների բացահայտմանը: Գնահատելով հետազոտությունը՝ կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունում բարձրացրած հարցերն արդիական են և լուսաբանված են անհրաժեշտ խորությամբ: Ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատություն է: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են վեց •իտական հոդվածներում:

Անի Համլետի Գալստյանի «Արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի վարիչի պաշտոնակատար
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գրիգոր Նազարյան**

ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու, **Թադևոս Ավետիսյան**

ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու, **Ժորա Սարգսյան**

Գ.Նազարյանի, Թ.Ավետիսյանի, Ժ.Սարգսյանի ստորագրությունների իսկությունը հաստատում եմ.

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ **Նաիրա Դարբինյան**